# Հանուն հայրենյաց

Արցախի ազատագրական բանակի
հիմնադիր ու հրամանատար
Լեոնիդ Ազգալդյանը մեկն էր
այն նվիրյալներից,
որոնք վառ են պահում
ազգի ոգին:
Նա է ազատամարտիկներից
բանակ ստեղծել՝
սատար կանգնելով Արցախի
ժողովրդին: Իսկ առավել
քաջերին վստահել է
առաջնորդելու զորամիավորումները:
Նրանցից մեկը Մարտակերտի
միավորման հրամանատար
Վլադիմիր Բալայանն էր,
Լեոնիդի սիրելին:
Բայց անողոք է ճակատագիրը:
Հունիսի 24-ին քարացել էր
Ազատության հրապարակը:
Ժողովուրդը հրաժեշտ էր տալիս
Լեոնիդին, իսկ Արցախում
օրեր առաջ հրաժեշտ էին տվել
նրա ընկերոջը՝ Վլադիմիրին: